# Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի ԹԻՎ 37 ԵՎ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի ԹԻՎ 38 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 37 որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշման վերնագիրն անհրաժեշտ է գրառել կրճատ (հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մաս): Որոշման վերնագիրը, բովանդակությունը և որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածի վերնագիրը չեն համապատասխանում միմյանց, բացի այդ որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածի համարակալումը սխալ է գրառված:

Թիվ 38 որոշման բովանդակության մեջ լրացվող (փոփոխվող) իրավական ակտի լրիվ անվանումը գրառված չէ: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի՝ հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում: Բացի այդ, որոշման բովանդակության մեջ «4-րդ» բառերից հետո գրառված «կետը» բառն անհրաժեշտ է փոխարինել «ենթակետը» բառով:

*Կատարող՝ Շ. Շաքարյանց*
*10.09.2020թ.*